

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԳՈ. ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԿԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Պրակտիկա VII

1953

Выпуск VII

Ա. Ա. ՄԵԶՐԱՔՅԱՆ

ԿՈՐՆԳԱՆԻ ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՎԻՐՈՒԼԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ

Փալարաբակտերիաները նպաստում են ոչ միայն թիթեռնածաղկավոր բույսերի բերքատվության բարձրացմանը և հողն ազդացին միացություններով հարստացնելու, այլև, միաժամանակ, նպաստում են գյուղատնտեսական մի շարք այլ կուտարաների բերքի ավելացմանը:

Բայտ Ե. Ն. Միջուսափինի (1941), Դ. Ն. Պրյանիշնիկովի (1936) և ուրիշների՝ ազատ ապրող, ազոտ կապող բակտերիաները, մեկ վեգետացիոն շրջանում մեկ հեկտար հողը հարստացնում են 50, իսկ պալարաբակտերիաները՝ 200 և ավելի կիլոգրամ ազոտով: Բացի այդ, Մ. Ս. Լոյցյանսկայայի (1941), Հ. Կ. Փանոսյանի (1939), Ա. Գ. Պետրոսյանի (1939), Ֆ. Յու. Գելցերի (1948), Կ. Ի. Ռուդակովի, Գ. Վ. Լոպատինայի, Օ. Ի. Շվեցովայի (1936) և ուրիշների աշխատառվթյուններից պարզվում է, որ պալարաբակտերիաների ակտիվ շտամները ոչ միայն բարձրացնում են թիթեռնածաղկավոր բույսի բերքատվությունը, այլև հարստացնում են նրանց սպիտակուցային նյութերով:

Բայտ Ն. Ն. Եֆրոսինի և Ի. Ե. Միլովայի (1941), Մ. Պ. Կորսակովայի և Ա. Գ. Կոնոկոստինայի (1936) և ուրիշների տվյալների, թիթեռնածաղկավոր բույսերի մեջ ազոտի քանակը, պալարաբակտերիաներով վարակելու գեպքում, մոտ վեց անգամ ավելի է, քան շվարակված բույսերի մեջ: Նույնը նկատվել է նաև մեջ մոտ (1946) բուլշնայի վերաբերյալ կատարած ուսումնասիրություններում: Անկայն թիթեռնածաղկավոր բույսերի մեջ ազոտի քանակի ավելացումը մեծ մասամբ կախված է պալարաբակտերիաների վիրուզենտության և ակտիվության աստիճանից, մինչդեռ այս հարցը իր մանրամասնություններով մինչև օրս էլ լրիվ պարզաբանված չէ, մանավանդ կորնդանի պալարաբակտերիաների վերաբերյալ: Ելնելով դրանից, մենք անհրաժեշտ համարեցինք հետազոտել կորզնգանի պալարաբակտերիաները:

Այդ նպատակի համար մենք դրել ենք վեգետացիոն և դաշտային փորձեր:

Վեգետացիոն փորձերի համար օգտագործել ենք Պրյանիշնիկովի սննդանյութով մշակված ստերիլ ավազը, որը լցրել ենք երեք կիլոգրամ տարողություն ունեցող մետաղյա անոթների մեջ, ավազի խոնավությունը միշտ պահպանել ենք ջրունակության 60 տոկոսի շափով: Ցանքը կատարել ենք ախտահանված սերմերով և վարակել 4—5-օրյա կուտուրայի համաշափ սուսպենզիայով, սերմերը համապատասխան սուսպենզիայի աղդեցության տակ թողնելով:

30 բուժեց:

Փորձն ունեցել է երեք կրկնողություն: Ուսումնասիրել և փորձարկել ենք կորնգանի պալարաբակտերիաների 18 շտամներ, մեկուսացվել են Հայկական ՍՍՌ Մարտունու շրջանի տարբեր կլիմայական պայմաններ ունեցող, ծովի մակերևույթից 1800—2000 մ բարձրության վրա գտնվող հողերից:

Փորձի վերջում չափել ենք բույսերի բարձրությունը, հաշվի առել նրանց բերքը, պալարիկների թիվն ու քաշը, որոշել ենք բույսի տերևների, արմատների ու պալարիկների աղոտը:

Փորձերից ստացված արդյունքներն ամփոփված են աղյուսակ:

1-ում:

Աղյուսակ 1

Կորնգանի պալարաբակտերիաների ակտիվությունն
ու վերուկանություններ

Շտամները	Բերքը %/ ներով	10 բույսի պալարիկ- ների քաշը գ-ներով	Աղյուսակ 1-ուներով	
			ակտերներում	արմատներում
Կորնգանի	100	չկա	3,11	2,06
3	107	0,58	3,63	2,11
4	135	6,20	4,75	2,31
7	117	2,30	4,09	2,06
9	115	2,0	3,86	2,07
10	105	0,53	3,10	1,86
13	110	1,50	3,81	2,02
14	125	3,10	4,54	1,96
15	120	2,80	4,51	2,46
16	127	3,80	4,61	2,07

Աղյուսակ 1-ում բերված թվական տվյալները ցույց են տալիս, որ հետազոտվող շտամներից ավելի ակտիվ և վիրուկենտ են № № 4,

4, 14, 15 և 16 շտամները, որոնք հիմնականում մեկուացվել են սոսպիզ, թեթև ենթակավային, շագանակագույն սևահողերից:

№ 4 շտամը բերքի հավելում է տարիս 35 տոկոս, № 14-ը՝ 25 տոկոս, № 15-ը՝ 20 տոկոս և № 16-ը՝ 27 տոկոս, մինչդեռ մյուս շտամները բերքն ավելացնում են միայն 5—10 տոկոսով:

Հիշյալ ազուտակի ավալները միաժամանակ ցույց են տալիս, որ պալարիկների քաշը և բույսի տարբեր մասերում ազուսի քանակը նույնպես ավելանում են № 4, 14, 15 և 16 շտամներով վարակված բույսերի մոտ: Պալարիկների քաշը հասնում է 2,8—6,2 գ. այնինչ մյուս շտամներով վարակելու դեպքում պալարիկների քաշը հազիվ հասնում է 0,5—2,0 գ.:

Պալարաբակտերիաներով վարակված բույսերը կոնտրոլի համեմատությամբ ավելի շատ ազուսի պարունակում: Այսպես, օրինակ՝ եթե պալարաբակտերիաներով շվարակված բույսերի տերեներում ազուտը կազմում է 3,11 տոկոս, ապա № 4 շտամով վարակելու դեպքում ազուտի քանակը տերեներում կազմում է 4,75 տոկոս, իսկ № 14 շտամով վարակելու դեպքում՝ 4,54 տոկոս: Ինչ վերաբերում է արժատուներում պարունակվող ազուտի քանակին, ապա այստեղ ակտիվ շտամով վարակված բույսերի մեջ ազուտը երբեմն շատ է, իսկ երբեմն էլ քիչ:

Յ. Ցու. Գելցերի և Ա. Վ. Եվտենյայի աշխատանքները (1948) ցույց են տալիս, որ կորիւտատիվ կապ գոյություն ունի թիթեռնածաղկավոր բույսերի բերքի, պալարիկների քանակի և ազուտի կուտակման միջև, ընդ որում պալարաբակտերիաների ակտիվ շտամներով վարակված բույսերը տալիս են հզոր ու փարթամ աճ, պալարիկներով հարուստ են և նրանց մեջ սպիտակուցային նյութերն էլ շատ են:

Այդպիսի օրինաշափությունն նկատելի է նաև մեր ուսումնասիրություններում:

Հաստ Ա. Պ. Պետրոսյանի (1951) տվյալների՝ առվուլտի, կորընդանի, լորու, սիսեռի, մաշի, վիկի, արախիսի, երեքնուկի պալարիկների և թիթեռնածաղկավոր բույսերի քանակական փոխհարաբերությունները միշտ չեն, որ ուղիղ համեմատական են, ընդ որում այդ փոխհարաբերությունը կարող է արտահայտվել հետեւյալ կերպ. մի դեպքում բույսերի կշիռի մեծության հետ կարող է մեծ լինել նաև պալարիկների կշիռը, երկրորդ դեպքում բույսերի կշիռը կարող է մեծ լինել, իսկ պալարիկների կշիռը՝ փոքր, մի այլ դեպքում բույսերի կշիռը կարող է փոքր լինել, իսկ պալարիկների կշիռը 415—4

որ՝ մեծ: Մեր այս ուսումնասիրություններում այդ օրինաշափությունը նկատվում է միայն որոշ շտամների մոտ: Պալարաբակտերիաների հիշյալ շտամների վիրուկենառությունն ու ակտիվությունը դաշտային պայմաններում ստուգելու համար փորձեր են դրվել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Միկրոբիոլոգիայի սեկտորի փորձադաշտում՝ 20մ² տարածության վրա, երկու կրկնողությամբ: Ցանքից հետո, բուզսերի վեգետացիայի ընթացքում, յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ հաշվի են առնվել բույսերի բերքը, նրանց արմատների վրա եղած պալարիկների թիվն ու կշիռը և որոշվել է ազոտի քանակը տերևների, արմատների ու պալարիկների մեջ:

Այդ ուսումնասիրությունների արդյունքների թվական տվյալներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Կորնգանի պալարաբակտերիաների ակտիվությունն
ու վիրուենտությունը ծաղկման շրջանում*

Շտամները	Բերքը 0/0-ներով	10 բույսի պալարիկների հարի հզեռով զ-ներով	Աղյուսակ 0/0-ներով
Կոնտրոլ	100	0,195	3,98
3	123,03	0,330	4,10
4	172,20	3,900	5,07
7	138,45	1,100	4,45
9	126,15	0,950	4,34
10	112,30	0,225	3,98
13	124,61	0,560	4,33
14	164,61	3,300	4,84
15	159,23	2,100	4,76
16	169,20	3,600	4,98

Աղյուսակ 2-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ինչպես վեգետացիոն, այնպես էլ դաշտային փորձերում ավելի ակտիվ ու վիրուենտ են № № 4, 14, 15 և 16 շտամները, ընդ որում եթե պալարաբակտերիաներով շվարակված բույսերի բերքն ընդունենք 100, ապա № 4 շտամով վարակված բույսի բերքը հասնում է

* Վեգետացիայի տարբեր ժամկետներում չորս անգամ անալիլ է կատարվել որից ստացվում տվյալները միշտ էլ համարյա նույն օրինաշափությունն են ցույց տվել: Գրա համար էլ այսուել բերում ենք միայն բույսերի ծաղկման շրջանին վերաբերող անալիլի տվյալները:

172 տոկոսի, № 14 շտամով վարակված բույսի բերքը՝ 164 տոկոսի, № 15 շտամով վարակվածինը՝ 159 տոկոսի և այլն: Նշված շտամներով վարակված բույսերի մոտ պալարիկների կշիռը նույնպես մեծ է. այսպես, օրինակ՝ եթե № 4, 14, 15 և 16 շտամներով վարակված բույսերի պալարիկների կշիռը հավասար է 2,8—3,9 գ, մնացած շտամներով վարակված բույսերի պալարիկների կշիռը հազիվ հասնում է 0,225—1,100 գ:

Աղյուսակ 2-ի տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ ազոտն անհամեմատ ավելի մեծ տոկոս է կազմում պալարաբակտերիաներով վարակված բույսերի տերևներում, այսպես, օրինակ՝ եթե պալարաբակտերիաներով չվարակված բույսերի տերևներում ազոտը կազմում է 3,98 տոկոս, ապա պալարաբակտերիաների ակտիվ շտամներով վարակված բույսի տերևներում ազոտի քանակը կազմում է 4,76—5,07 տոկոս: Բացի տերևներից և արմատներից, ազոտը որոշվել է նաև բույսի պալարիկներում: Պալարիկների մեջ ազոտի որոշման վերաբերյալ տվյալները բերվում են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
Կորնդանի պալարիկներում
ազոտի քանակը 0/5-ներով

Շտամները	Աղյուսակը
Կոնտրոլ	6,86
3	7,42
4	9,80
7	8,54
9	8,12
10	7,0
13	7,98
14	9,42
15	9,38
16	9,52

Ինչպես ցույց են տալիս այս աղյուսակի տվյալները, եթե չվարակված բույսերի պալարիկներում ազոտի քանակը կազմում է 6,86 տոկոս, ապա պալարաբակտերիաների ակտիվ շտամներով վարակված բույսերի պալարիկներում այն կազմում է 9,38—9,8 տոկոս. այստեղ նույնպես ազոտի քանակն ավելի մեծ է № 4, 14, 15, 16 շտամներով վարակված բույսերի պալարիկներում: Բացի

шет, а нитрификация N_2H_4 азота, при этом кислород потребляется вдвое меньше, чем при окислении азота. Органические кислоты, выделяемые из клубеньковых бактерий, способствуют разложению карбонатов и повышению содержания доступного фосфора в почве.

Культурные опыты показали, что клубеньковые бактерии способны использовать азотные соединения, выделенные из растений, для своего роста и размножения.

1. Установлено, что клубеньковые бактерии способны использовать азотные соединения, выделенные из растений, для своего роста и размножения. Культурные опыты показали, что клубеньковые бактерии способны использовать азотные соединения, выделенные из растений, для своего роста и размножения.

2. Культивирование клубеньковых бактерий способствует повышению содержания доступного фосфора в почве. Культивирование клубеньковых бактерий способствует повышению содержания доступного фосфора в почве.

3. Культивирование клубеньковых бактерий способствует повышению содержания доступного фосфора в почве.

4. Культивирование клубеньковых бактерий способствует повышению содержания доступного фосфора в почве.

5. №№ 4, 14, 15 и 16 установили, что клубеньковые бактерии способны использовать азотные соединения, выделенные из растений, для своего роста и размножения.

Физиология

Гельцер Ф. Ю. и Евгееева А. В. 1948. Лабораторный метод определения активности клубеньковых бактерий. Пути повышения активности клубеньковых бактерий. Огиз—Сельхозгиз, стр. 89.

Ефрон Н. Н. и Милова И. Е. 1941. Влияние клубеньковых бактерий на донник. Микробиология, т. X, вып. 4, стр. 456.

Корсакова М. П. и Конокотина А. Г. 1936. Микробиологические процессы в сельхоз. производстве, минеральное питание бобового, усвоение азота. Труды Всесоюзного института сельхоз. микробиологии, т. VIII, вып. 2, стр. 5.

Лойцянская М. С. 1941. О развитии клубеньковых бактерий в корнях

алкалоидного и безалкалоидного люпина. Микробиология, т. X, вып. 1, стр. 15.

Машустин Е. Н. 1941. Химизм усвоения атмосферного азота микроорганизмами. Химизация соц. земледелия, № 6, стр. 17.

Մենցարյան Ա. Ա. 1946. Քոռաշնայի պալարաբակտերիաների ակտիվությունն ու վիրուզնառաթյունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Միկրոբիոլոգիան ժողովածու, պրակ 2, էջ 25:

Прянишников Д. Н. 1936. Азотный баланс в нашем земледелии. Химизация соц. земледелия, № 9, стр. 5.

Паносян А. К. 1939. Применение нитрагина в Армянской ССР. Микробиология, т. VIII, вып. 7, стр. 838.

Պետրոսյան Ա. Պ. 1939. Ազոտային և ֆոսֆորային պարաբանյութերի աղցանաթյունը պալարաբակտերիաների և թիթեռնածաղկավոր բույսերի (սոյա) փոխազգեցության վրա, ՀԽՍՀ Պետ. Համալսարանի տեղեկադիր, համար 9, էջ 375:

Պետրոսյան Ա. Պ. 1951. Թիթեռնածաղկավոր բույսերի քաշի և պալարիկների քանակական փոխարարերությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Միկրոբիոլոգիան ժողովածու, պրակ 6, էջ 25:

Рудаков К. И., Лопатина Г. В. и Швецова О. И. 1936. Руководство по нитрагинизации бобовых культур, Изд. ВАСХНИЛ.

А. А. Меграбян

Вирулентность и активность клубеньковых бактерий эспарцета

Р е з ю м е

Вопрос подбора активных и вирулентных штаммов клубеньковых бактерий при нитрагинизации семян имеет исключительное значение. Наша цель заключалась в изучении вирулентности и активности клубеньковых бактерий эспарцета, в связи с малой изученностью бактерий этой культуры. Для этого были заложены вегетационные и полевые опыты, а также исследовано количество азота в различных частях растений. Проверка активности и вирулентности штаммов производилась периодически, через каждые 15 дней, в течение вегетационного периода.

Суммируя результаты проведенных опытов можно притти к следующему заключению:

1. Штаммы (№ № 4, 14, 15 и 16), выделенные из культурно-поливных, легко-суглинистых, каштаново-черноземных почв Мартунинского района, являются наиболее активными, повышающими урожай в среднем на 59—72%.

2. Заражение семян эспарцета активными клубеньковыми бактериями приводит к повышению содержания азота в различных частях растений (в зараженных—5,07%, в контрольных—3,98%).

3. Исследования показали, что содержание азота в клубеньках выше, чем в остальных частях растений.

4. У падающего большинства штаммов наблюдается коррелятивная зависимость между урожаем, количеством клубеньков и содержанием в них азота.

5. На основании полученных данных самые активные и вирулентные штаммы (№ № 4, 14, 15 и 16) могут быть предложены нитрагинному производству.